# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# № ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-17/12

ք. Երևան «28» «04» 2017թ.

ՀՀ բնապահպանության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Հ.Հովհաննիսյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ն, ի դեմս տնօրենի ժ/պ Կ.Հակոբյանի (այսուհետև՝ Վաճառող), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (Հավելված №2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի Հավելված №1-ով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված **ապրանքները** (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար (Հավելված №3):

## 2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1. Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին (Ստացողին) Պայմանագրի Հավելված №2-ով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2. Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին (Ստացողին)՝ նրա կողմից նշված հասցեով (ներով):

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Գնորդն իրավունք ունի՝**

3.1.1. Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 (երեք) աշխատանքային օրից ավելի.

3.1.2. Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3. Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4. Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5. Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6. Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7. Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1. Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում կամ խախտվել է սույն Պայմանագրի 5.1 կետով սահմանված պայմանը.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 (երեք) աշխատանքային օրից ավելի,

գ) մատակարարված Ապրանքի շուկայական գինը ավելի քան 5 (հինգ) տոկոսով ավելին է Ապրանքի հանձնման պահին շուկայում գործող գներից,

դ) Վաճառողը չի կատարել սույն Պայմանագրի 3.4.4, 3.4.5 և 3.4.9 կետերով նախատեսված պարտավորությունները:

3.1.8. Հննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**3.2. Գնորդը պարտավոր է՝**

3.2.1. Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2. Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել վաճառողին.

3.2.3. Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4. Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5. Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

**3.3. Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1. Գնորդից (Ստացողից) պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2. Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3. Գնորդից (Ստացողից) պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4. Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմամագիրը:

3.3.4.1. Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5. Գնորդի (Ստացողի) համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

**3.4. Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1. Գնորդին (Ստացողին) հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2. Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին (Ստացողին) մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3. Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն Պայմանագրի 3.1.2 «բ» և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4. Գնորդին (Ստացողին) հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5. Գնորդին (Ստացողին) հանձնել Պայմանագրի Հավելվածներ №1-ով և №2-ՈՎ նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի (Ստացողի) պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6. Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7. Հետ տանել Գնորդի (Ստացողի) կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8. Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9. Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10. Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11. Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ **866 400 (ութ հարյուր վաթսունվեց հազար չորս հարյուր)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2. Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ Հավելված №3-ով, նախատեսված ամսում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում) բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2017 թվականի դեկտեմբերի 25-ը:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1. Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին: Ապրանքի նոր և չօգտագործված լինելու պայմանը պարտադիր է:

## 6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1. Վաճառողն պրանքը հանձնում է Գնորդին (Ստացողին)՝ Պայմանագրի Հավելված №2-ում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2. Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը: Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված №4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված №4.1): Սույն կետով նախատեսված պայմանի խախտումը համարվում է մատակարարման ժամկետի խախտում:

6.3. Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4. Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5. Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6.6. Ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ Վաճառողը Գնորդին է տրամադրում նաև տվյալ խմբաքանակի Ապրանքների ծագման երկրի սերտիֆիկատը: Սույն կետը չի գործում, եթե չի մատակարարվում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք:

## 7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2. Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3. Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4. Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5. Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց Պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է ՀՀ օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3. Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության ՀՀ դատարաններում:

9.4. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է ՀՀ կառավարությունը:

9.5. Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.6. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.7. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.8. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.9. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի

պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.10. Պայմանագիրը կազմված է 5 (հինգ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N N 1; 2; 3; 4 և 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.11. Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| **ՀՀ բնապահպանության նախարարություն** | **«Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ** |
| ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք | ք.Երևան, Չարենցի 46 |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ |
| ՀՀ 900011007854 | ՀՀ 16048321347800 |
| 900011007631 | |
| ՀՎՀՀ 02507198 | ՀՎՀՀ 02659596 |
| ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար | «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ |
| ***Հ.Հովհաննիսյան*** | ***Կ.Հակոբյան*** |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| **Կ.S.** | **Կ.S.** |

Հավելված № 1
«28» «04» 2017թ. կնքված
№ ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-17/12 պայմանագրի

**ԳՆՈՐԴ**
**ՀՀ բնապահպանության նախարարություն**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք

ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
հ/հ 900011007854
900011007631
ՀՎՀՀ 02507198
ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավար
Հ.Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
**«Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ**
ք.Երևան, Չարենցի 46
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
հ/հ 16048321347800

ՀՎՀՀ 02659596
«Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Ժ/պ
Կ.Հակոբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| հ/հ | Գնման առարկայի՝ ապրանքի անվանումը | Թղթի տեսակը | Տպագրությունը | Ձևաթղթի չափը |
|---|---|---|---|---|
| | **Ձևաթղթեր** | | | |
| 1 | Նախարարի ելից գրությունների ձևաթուղթ | օֆսեթ, 110գր/մ² | միակողմանի, գունավոր | A4 |
| 2 | Աշխատակազմի ղեկավարի ելից գրությունների ձևաթուղթ | օֆսեթ, 110գր/մ² | միակողմանի, գունավոր | A4 |
| 3 | Նախարարի տեղակալի ելից գրությունների ձևաթուղթ | օֆսեթ, 110գր/մ² | միակողմանի, գունավոր | A4 |
| 4 | Աշխատակազմի ղեկավարի ելից գրությունների ձևաթուղթ | օֆսեթ, 110գր/մ² | միակողմանի, գունավոր | A4 |
| 5 | Նախարարի հրամանի ձևաթուղթ | օֆսեթ 80գր/մ² | միակողմանի | A4 |
| 6 | Աշխատակազմի ղեկավարի հրամանի ձևաթուղթ | օֆսեթ 80գր/մ² | միակողմանի | A4 |
| 7 | Ջրօգտագործման թույլտվությունների ձևաթուղթ | օֆսեթ, 210 գր/մ² | երկկողմանի, միագույն | A3 |
| 8 | Վարչական վիճակագրական հաշվետվություն<br>Ձև N1-թափոն (տարեկան)-Թափոնների առաջացման, օգտագործման և հեռացման մասին | օֆսեթ, ոչ պակաս 70գր/մ² | երկկողմանի, միագույն | A3 |
| 8.1 | Վարչական վիճակագրական հաշվետվություն<br>Ձև 1 թափոն (տարեկան)-Թափոնների առաջացման, օգտագործման և հեռացման մասին | օֆսեթ, ոչ պակաս 70գր/մ² | երկկողմանի, միագույն | A4 |
| 9 | Վարչական վիճակագրական հաշվետվություն<br>Ձև N2-ՏԱ(ջուր) (տարեկան)-Ջրօգտագործման մասին | օֆսեթ, ոչ պակաս 70գր/մ² | երկկողմանի, միագույն | A3 |



| | | | | |
|---|---|---|---|---|
| 9.1 | Վարչական վիճակագրական հաշվետվություն<br>Ձև N2-ՏԱ(ջուր) (տարեկան)-Ջրօգտագործման մասին | օֆսեթ, ոչ պակաս 70գր/մ² | երկկողմանի, միագույն | A4 |
| 10 | Վարչական վիճակագրական հաշվետվություն<br>Ձև N2-տա(օդ) (տարեկան)-Անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի մասին | օֆսեթ, ոչ պակաս 70գր/մ² | երկկողմանի, միագույն | A3 |
| 11 | Հանձնարարական բնապահպանական օրենսդրության պահանջների խախտման(ումների) վերացման վերաբերյալ Ձև N6 | օֆսեթ 70գր/մ² | միակողմանի | A4 |
| 12 | Արձանագրություն վարչական իրավախախտման վերաբերյալ | օֆսեթ 70գր/մ² | երկկողմանի | A4 |
| 13 | Արձանագրություն վարչական իրավախախտման վերաբերյալ /Ծանուցման հատվածով/ | օֆսեթ 70գր/մ² | երկկողմանի | A4 |
| 14 | Ստուգման ԱԿՏ | օֆսեթ 70գր/մ² | երկկողմանի | A4 |
| 15 | ԱԿՏ-Բնապահպանական և բնօգտագործման վճարների օբյեկտ համարվող փաստացի ծավալների չափաքանակների ստուգման | օֆսեթ 70գր/մ² | երկկողմանի | A4 |
| 16 | Թղթապանակ | Մեջտեղից ծալվող, թուղթը՝ 300 գր/մ² կավճապատ, տպագրությունը գունավոր, ներսից գրպանով:<br>Հավորված բնապահպանության նախարարության տարբերանշանով | միակողմանի | A3 |
| 17 | Թուղթ նշումների | Տրցակներով, 1 մ² մակերեսը՝ ոչ պակաս 70 գ, տուփում ոչ պակաս 100 հատ,<br>ՀՀ բնապահպանության նախարարության լոգոտիպով: | միակողմանի | 10X10սմ |
| 18 | Բացիկներ | Թուղթը՝ 300 գր/մ² դեկորատիվ:<br>Չրաբը համապատասխան չափի՝ օֆսեթ, ոչ պակաս 80գր/մ2, ՀՀ բնապահպանության նախարարության գունավոր լոգոտիպով տպագրված:<br>Ներդիրը՝ պերգամենտից (12X18) | Միջնածալքով, տպագրությունը ոսկեդաջում, երկկողմանի, ձևավորված բնապահպանության նախարարության տարբերանշանով | 12X36սմ |
| | **Մատյաններ** | | | |
| 1 | N 1-Վարչական ակտերի հաշվառման գրանցամատյան | օֆսեթ, ոչ պակաս 70գր/մ², 50 թերթ, կազմը՝ կոշտ ստվարաթղթե ոչ պակաս 300 գր/մ² կազմով | երկկողմանի | A3 |
| 2 | N 2-Վարչական վարույթի վերաբերյալ գործերի հաշվառման գրանցամատյան | օֆսեթ, ոչ պակաս 70գր/մ², 100 թերթ, կազմը՝ կոշտ ստվարաթղթե ոչ պակաս 300 գր/մ² կազմով | երկկողմանի | A3 |
| 3 | Ձև-N 1- Բուսական աշխարհի պետական կադաստրի տվյալների գրանցամատյան | օֆսեթ, ոչ պակաս 70գր/մ², 50 թերթ, կազմը՝ կոշտ ստվարաթղթե ոչ պակաս 300 գր/մ² կազմով | երկկողմանի | A3 |
| 4 | Ձև-N 1- Կենդանական աշխարհի պետական կադաստրի տվյալների գրանցամատյան | օֆսեթ, ոչ պակաս 70գր/մ², 50 թերթ, կազմը՝ կոշտ ստվարաթղթե ոչ պակաս 300 գր/մ² կազմով | երկկողմանի | A3 |
| 5 | Կեղտաջրերում պարունակվող վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի /ԹՍԱ/ անհատական նորմաների հաշվառման գրանցամատյան | օֆսեթ, ոչ պակաս 70գր/մ², 100 թերթ, կազմը՝ կոշտ ստվարաթղթե ոչ պակաս 300 գր/մ² կազմով | երկկողմանի | A3 |
| 6 | Ջրօգտագործման և Ջրահեռացման /Ջ ԵՎ Ջ/ անհատական նորմերի հաշվառման գրանցամատյան | օֆսեթ, ոչ պակաս 70գր/մ², 100 թերթ, կազմը՝ կոշտ ստվարաթղթե ոչ պակաս 300 գր/մ² կազմով | երկկողմանի | A3 |
| 7 | Բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկ-հաշվետվությունների | օֆսեթ, ոչ պակաս 70գր/մ², 100 թերթ, կազմը՝ կոշտ ստվարաթղթե ոչ պակաս 300 գր/մ² կազմով | երկկողմանի | A3 |

Հավելված № 2
«28» «04» 2017թ. կնքված
№ ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-17/12 պայմանագրի

**ԳՆՈՐԴ**
**ՀՀ բնապահպանության նախարարություն**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք

ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 90001007854
90001007631
ՀԿՀՀ 02507199
ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավար
Հ.Հովհաննիսյան
(ստորագրություն)

**ՎԱՃԱՌՈՂ**
**«Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ**
ք.Երևան, Չարենցի 46
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
ՀՀ 16048321347800

ՀԿՀՀ 02659596
«Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության
կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/ա
Կ.Հակոբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(հազար դրամ)

| հ/հ | Գնման առարկայի՝ ապրանքի անվանումը | Չափի միավորը | Միավորի գինը (դրամ) | Նախատեսվում է գնել մինչև 2017 թվականին | | | | | | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | I եռամսյակ | | II եռամսյակ | | III եռամսյակ | | IV եռամսյակ | | | |
| | | | | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը |
| | **Ձևաթղթեր** | | | | | | | | | | | | |
| 1 | Նախարարի ելից գրությունների ձևաթուղթ | հատ | 45.0 | - | - | 1000 | 45.00 | - | - | - | - | 1000 | 45.00 |
| 2 | Նախարարի առաջին տեղակալի ելից գրությունների ձևաթուղթ | հատ | 45.0 | - | - | 500 | 22.50 | | - | | - | 500 | 22.50 |
| 3 | Նախարարի տեղակալի ելից գրությունների ձևաթուղթ | հատ | 45.0 | | - | 500 | 22.50 | | - | | - | 500 | 22.50 |
| 4 | Աշխատակազմի ղեկավարի ելից գրությունների ձևաթուղթ | հատ | 45.0 | - | - | 1500 | 67.50 | - | - | - | - | 1500 | 67.50 |
| 5 | Նախարարի հրամանի ձևաթուղթ | հատ | 8.0 | - | - | 500 | 4.00 | - | - | - | - | 500 | 4.00 |
| 6 | Աշխատակազմի ղեկավարի հրամանի ձևաթուղթ | հատ | 8.0 | - | - | 1000 | 8.00 | - | - | - | - | 1000 | 8.00 |
| 7 | Ջրօգտագործման թույլտվությունների ձևաթուղթ | հատ | 80.0 | - | - | 2000 | 160.00 | - | - | - | - | 2000 | 160.00 |
| 8 | Վարչական վիճակագրական հաշվետվություն Ձև N1-թափոն (տարեկան)-Թափոնների առաջացման, օգտագործման և հեռացման մասին | հատ | 16.0 | - | - | 2000 | 32.00 | - | - | - | - | 2000 | 32.00 |
| 8.1 | Վարչական վիճակագրական հաշվետվություն Ձև 1 թափոն (տարեկան)-Թափոնների առաջացման, օգտագործման և հեռացման մասին | հատ | 10.0 | - | - | 2000 | 20.00 | - | - | - | - | 2000 | 20.00 |



| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 9 | Վարչական վիճակագրական հաշվետվություն Ձև N2-ՏԱ(ջուր) (տարեկան)-Ջրօգտագործման մասին | հատ | 16.0 | - | - | 2000 | 32.00 | - | - | - | - | 2000 | 32.00 |
| 9.1 | Վարչական վիճակագրական հաշվետվություն Ձև N2-ՏԱ(ջուր) (տարեկան)-Ջրօգտագործման մասին | հատ | 10.0 | - | - | 2000 | 20.00 | - | - | - | - | 2000 | 20.00 |
| 10 | Վարչական վիճակագրական հաշվետվություն Ձև N2-տա(օդ) (տարեկան)-Անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի մասին | հատ | 16.0 | - | - | 2500 | 40.00 | - | - | - | - | 2500 | 40.00 |
| 11 | Հանձնարարական բնապահպանական օրենսդրության պահանջների խախտման(ումների) վերացման վերաբերյալ Ձև N6 | հատ | 8.0 | - | - | 100 | 0.80 | - | - | - | - | 100 | 0.80 |
| 12 | Արձանագրություն վարչական իրավախախտման վերաբերյալ | հատ | 10.0 | - | - | 500 | 5.00 | - | - | - | - | 500 | 5.00 |
| 13 | Արձանագրություն վարչական իրավախախտման վերաբերյալ /Ծանուցման հատվածով/ | հատ | 10.0 | - | - | 500 | 5.00 | - | - | - | - | 500 | 5.00 |
| 14 | Ստուգման ԱԿՏ | հատ | 10.0 | - | - | 500 | 5.00 | - | - | - | - | 500 | 5.00 |
| 15 | ԱԿՏ-Բնապահպանական և բնօգտագործման վճարների օբյեկտ համարվող փաստացի ծավալների չափաքանակների ստուգման | հատ | 10.0 | - | - | 100 | 1.00 | - | - | - | - | 100 | 1.00 |
| 16 | Թղթապանակ | հատ | 150.0 | | | 150 | 22.50 | | | | | 150 | 22.50 |
| 17 | Թռուցիկ նշումների ՀՀ բնապահպանության նախարարության տարբերանշանով | տուփ | 400.0 | | | 59 | 23.60 | | | | | 59 | 23.60 |
| 18 | Բացիկներ | հատ | 600.0 | - | - | - | - | 500 | 300.00 | - | - | 500 | 300.00 |
| | **Ընդամենը** | | | - | - | X | **536.40** | X | **300.00** | - | - | X | **836.40** |
| | **Մատյաններ** | | | | | | | | | | | | |
| 1 | N 1-Վարչական ակտերի հաշվառման գրանցամատյան | հատ | 1000.0 | - | - | 4 | 4.00 | - | - | - | - | 4 | 4.00 |
| 2 | N 2-Վարչական վարույթի վերաբերյալ գործերի հաշվառման գրանցամատյան | հատ | 1000.0 | - | - | 4 | 4.00 | - | - | - | - | 4 | 4.00 |
| 3 | Ձև-N 1- Բուսական աշխարհի պետական կադաստրի տվյալների գրանցամատյան | հատ | 1000.0 | - | - | 5 | 5.00 | - | - | - | - | 5 | 5.00 |
| 4 | Ձև-N 1- Կենդանական աշխարհի պետական կադաստրի տվյալների գրանցամատյան | հատ | 1000.0 | - | - | 1 | 1.00 | - | - | - | - | 1 | 1.00 |
| 5 | Կեղտաջրերում պարունակվող վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի /ԹՍԱ/ անհատական նորմների հաշվառման գրանցամատյան | հատ | 1000.0 | - | - | 3 | 3.00 | - | - | - | - | 3 | 3.00 |
| 6 | Ջրօգտագործման և Ջրահեռացման /Ջ ԵԿ Ջ/ անհատական նորմերի հաշվառման գրանցամատյան | հատ | 1000.0 | - | - | 3 | 3.00 | - | - | - | - | 3 | 3.00 |
| 7 | Բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկ-հաշվետվությունների | հատ | 1000.0 | - | - | 10 | 10.00 | - | - | - | - | 10 | 10.00 |
| | **Ընդամենը** | | | - | - | X | **30.00** | X | - | - | - | X | **30.00** |
| | **Ընդհանուրը** | | | - | - | X | **566.50** | X | **300.00** | - | - | X | **866.40** |

Հավելված № 3
«28» «04» 2017թ. կնքված
№ ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-17/12 պայմանագրի

**ԳՆՈՐԴ**
**ՀՀ բնապահպանության նախարարություն**

ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011007854
900011007631
ՀՎՀՀ 02507198
ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավար
**Հ.Հովհաննիսյան**
(ստորագրություն)
**Կ.S.**

**ՎԱՃԱՌՈՂ**
**«Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ**

ք.Երևան, Չարենցի 46
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
ՀՀ 16048321347800

ՀՎՀՀ 02659596
«Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության
կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ
**Կ.Հակոբյան**
(ստորագրություն)
**Կ.S.**

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(հազար դրամ)

| Ծրագրի անվանումը | h/h | Գնման առարկայի՝ ապրանքի անվանումը | Ֆինանսավորումը Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեից, ընդ որում՝(ըստ ամիսների աճողական կարգով) | | | | | | | | | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | I եռամսյակ | | | II եռամսյակ | | | III եռամսյակ | | | IV եռամսյակ | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | |
| Նախարարության աշխատակազմ (900011007854) | 1. | Ձևաթղթեր | - | - | - | - | 491.4 | 491.4 | 791.4 | 791.4 | 791.4 | 791.4 | 791.4 | 791.4 | 791.4 |
| | 2. | Մատյաններ | - | - | - | - | 30.00 | 30.00 | 30.00 | 30.00 | 30.00 | 30.00 | 30.00 | 30.00 | 30.00 |
| Նախարարի աշխատակազմ (900011007631) | 3. | Ձևաթղթեր | - | - | - | - | 45.00 | 45.00 | 45.00 | 45.00 | 45.00 | 45.00 | 45.00 | 45.00 | 45.00 |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | - | - | - | - | 566.4 | 566.4 | 866.4 | 866.4 | 866.4 | 866.4 | 866.4 | 866.4 | 866.4 |

Հավելված № 4
«29» «04» 2017թ. կնքված
№ ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-17/12 պայմանագրի

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| **ՀՀ բնապահպանության նախարարություն** | **«Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ** |
| ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք | ք.Երևան, Չարենցի 46 |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ |
| ՀՀ 900011007854 | ՀՀ 16048321347800 |
| 900011007631 | |
| ՀՎՀՀ 02507198 | ՀՎՀՀ 02659596 |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №
# ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» «_____» 2017թ.

Պայմանագրի անվանումը՝ **Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պետական գնման պայմանագիր**

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ **«29» «04» 2017թ.**

Պայմանագրի համարը՝ № **ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-17/12**

Պատվիրատուն՝ ի դեմս **ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի քարտուղարության պետ Ն.Ալավերդյանի,** և Պայմանագրի կողմը՝ ի **դեմս «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ Կ.Հակոբյանի,** հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2017թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N ____ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

*Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝*

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ վճարման ժամանակացույցի) |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | **Ընդամենը** | | | | | | | |

Վերոհիշյալ Մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-Ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| **Ապրանքը հանձնեց** | **Ապրանքն ընդունեց** |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված № 4.1
«28» «04» 2017թ. կնքված
№ ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-17/12 պայմանագրի

# ԱԿՏ N
## պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ բնապահպանության նախարարության (այսուհետ՝ Գնորդ) և «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև «28» «04» 2017 թվականին կնքված № ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-17/12 գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը «_____» «_____» 2017 թվականին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| Անվանումը | Քանակական ցուցանիշը (փաստացի) | Չափի միավորը |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

## ԿՈՂՄԵՐԸ

| **Հանձնեց** | **Ընդունեց**<br>հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
|---|---|
| _____<br>ստորագրություն | _____<br>ստորագրություն |
| _____<br>ազգանուն, անուն | _____<br>ազգանուն, անուն |